Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թ.
ապրիլի 12-ի նիստի N 14
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԴՐՈՂԻ (ՆԵՐՄՈՒԾՈՂԻ) ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2018-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսական ապահովումը
1	2	3	4	5	6
1.	<<Թափոնների մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում	1.ԱՊԸ ընդլայնման գծով պարտավորությունների ամրագրում: 2.Գործունեությունը դադարեցրած ընկերությունների գործածությունից դուրս եկած արտադրանքի (ապրանքների) օգտահանման հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով դրամագլխի, ստեղծման դրույթների ամրագրում: 3.Գործածությունից դուրս եկած արտադրանքի (ապրանքների) օգտահանման նորմատիվների սահմանման դրույթների ամրագրում: 4.Գործածությունից դուրս եկած արտադրանքի (ապրանքների) օգտահանման նորմատիվների կատարողականի վերաբերյալ դրույթների ամրագրում:	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2018 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի ՀՀ	1.Արտադրության (բացառությամբ ընդերքօգտագործման) և (կամ) սպառման թափոնները հատուկ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2019 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	կառավարության աշխատակազմ ներկայացում:	հատկացված տեղերում տեղադրելու և պահելու համար, բնապահպանական հարկի դրույքաչափերի ավելացում: 2.Գործածությունից դուրս գալուց հետո օգտահանման ենթակա ապրանքների արտադրման (ներմուծման) համար բնապահպանական հարկի դրույքաչափերի սահմանում: 3. Օգտահանման ենթակա ապրանքների յուրաքանչյուր խմբի համար վճարների դրույքաչափերի և գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքման և օգտահանման սեփական մեխանիզմներ կիրառելու դեպքում՝ օգտահանման համար վճարված վճարների վերադարձման և (կամ) առաջիկա վճարումների հաշվին հաշվանցման մեխանիզմների սահմանում:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե		

3.	<<Օգտահանման ենթակա, շահագործման համար ոչ պիտանի ապրանքների (ներառյալ փաթեթվածքների) ցանկը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում	ԱՊԿ-ների միջոցով հավաքման, վերամշակման (օգտահանման), ենթակա շահագործումից դուրս եկած ապրանքների անվանացանկի առկայություն	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն նախարարություն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ էներգետիկ ենթակառուցվածք-ների և բնական պաշարների նախարարություն	2020 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
4.	<<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում	Աղբահանության և հավաքված աղբի աղբավայր կամ վերամշակման կետ տեղափոխման ըստ աղբի տեսակների առանձնացված իրականացմանն ուղղված միջոցառումների իրականացում	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում